# ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կոմայրի» թերթի հավելված

1991 թ. հուլիս, № 36: Գինը 50 կոպ.



ՎԱՀԱՆ ՍԵՎԱՆ

## ԵՂԵՐԱԿԱՆ ՇԱԲԱԹ

Հիշողությունը մարդուն տրված աստվածային պարգև է ու աստվածային պատիժ: Երանի՜ ի ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ ԳԵՏԸ մեզ ն՞րբ կառնի իր գիրկը և արդյոք կառնի", երբ յուրաքանչյուրս յուրովի ապրեցինք 1988 թ. դեկտեմբերի 7-ի արհավիրքը, որի սարսռեցուցիչ պատկերն ամբողջացնելու համար բոլորիս համայնական հիշողությունն է պետք: Գեհենից ողջ դուրս եկածներիս համար հիշողությունը մեռածների հետ կապող թելն է, որը կկտրվի միայն յուրաքանչյուրիս մեռնելու հետ: Որքան քանի ապրում ենք մենք՝ պիտի հիշենք: Դեռ թարմ են վերքերը. ավերակների մեջ է հայրենի հողը, և յուրաքանչյուր փլատակված տուն ճչում է... մեր ցավի ճիչը:

Դեկտեմբերյան օրերի իմ օրագիրն էլ ցավի ճիչ է: Ուշ եմ ներկայացնում, որ ցավի վրա նոր ցավ չավելացնեմ:

7.12.88 թ.
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Օր էր՝ ասածս բոլոր օրերի պես: Դեկտեմբերյան մշուշապատ առավոտ ու... ձմեռ,—անտարբեր Աշոցքի ցրտաշունչ բնությանը: Մարդիկ նայում են, տարակուսած թոթվում ուսերը, բայց բնության տարօրինակ երևույթին պատշաճ բացատրություն չեն գտնում:

Կարծես անհրաժեշտ մի ուժ ինձ քաշում է դեպի Լենինական: «Բանվոր» թերթի համար նոր բանաստեղծություններ եմ գրել, որոնցից մեկն էլ Լենինականին է նվիրված.

Ավերված Մշո տեղակ,
Թողնում՝ իմ հոր ու մոր,
Բացվում են աչքերիս դեմ
Ամեն ժամ և ամեն օր:
Ավերված Մուշը՝ մրմուռ,
Թեղուտը՝ ախ, կորուսյալ...
Թե ուզես, քեզ այս պահին
Պատրաստ եմ արյունս տալ:
Թե Մուշը ցավն է իմ խոր,
Դու՝ ցավիս դարման ու դեղ,
Քեզնից դուրս՝ իմ ողջ կյանքում
Չեմ գտնի հանգիստ մի տեղ:
Հոգ չէ, որ գրչիս տակից
Չի ծնվել Գյումրինամե,
Բայց գալիս համբուրում եմ
Ցոլվերքիդ քարերն ամեն:
Ավերված Մշո տեղակ,
Թողնում՝ իմ հոր ու մոր,
Բալզամ ես դառնում ցավիս
Ամեն ժամ և ամեն օր:

Օրջանային թերթի խմբագրությունում շտապում եմ ավարտել հերթական հոդվածը, որպեսզի ժամ առաջ հասնեմ Լենինական, երբ հնչում է հեռախոսազանգը: Գրողների միության Լենինականի բաժանմունքից է:

— Գալիս եմ,—ասում եմ բաժանմունքի քարտուղարին՝ Պանոսյան Ղուկասյանին ու կախում լսափողը: Շտապում եմ ամենևին չկաս-

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)



— Քանի՞սն են մնացել դասարանից:
— Հինգը...

Լուսանկարը՝ Վ. ԿՈՑՈՅԻ



Երկու փոքրիկ հրաշք մի ընտանիքից՝ ՄԱՐԻԱՄԻԿ ՎՐՈՒՅՐԻ ԹՈՐՈՍՅԱՆԸ ծնված 1978 թվականի օգոստոսի 31-ին և ԿԱՐԵՆ ՎՐՈՒՅՐԻ ԹՈՐՈՍՅԱՆԸ՝ ծնված 1980 թվականի հունվարի 30-ին, որոնք թռչնեցին ժամանակից շուտ: Քույր ու եղբայր երկու անմեղ զոհ դարձան երկրաշարժին:



Ինչ երազկոտ էին երկուսն էլ, կատակներ էին անում և ամենօրյա խաղն էլ «հարսն ու փեսան էր»: Վերջին անգամ լուսանկարվեցին միասին: Նրանց մտքով կարծես անցնում էր, որ միշտ միասին պետք է լինեն...

Նրանց հետ էր նաև իրենց սիրելի տատը՝ ՎԱԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ, ծնված 1918 թվին, որ այնքան կապված էր թոռների հետ:





Սանդրոյան Հարությունի Արբեյանի և Հարություն Արբեկյանի լուսանկարները անհաջող տպագրության պատճառով երկրորդ անգամ են տպագրվում: Նրանց մասին կարդալ «Հիշողություն» № 33-ում:

## ՌՈԲԵՐՏՈ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԸ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

Օրերս Լենինականում էին գտնվում 1956 թվականին մեծահարուստ Գալուստ Գյուլբենկյանի կտակի համաձայն Պորտուգալիայի մայրաքաղաքում հիմնված Գ. Գյուլբենկյանի ֆոնդի տնօրեն Ռոբերտո Գյուլբենկյանը, իր տիկնոջ ու դստեր, ինչպես նաև ֆոնդի վարչության անդամ Միքայել Եսայանը՝ տիկնոջ հետ:

— Մեզ խորապես ցնցեց մեր ժողովրդին պատահած ողբերգությունը,— Լենինականի քաղաքային կոմիտեում կայացած ընդունելության ժամանակ ասաց Ռ. Գյուլբենկյանը: Մենք՝ ես և պարոն Միքայել Եսայանի ընտանիքները մեծ հուզմունքով ենք սպասել այս պահին: Երկրաշարժից անմիջապես հետո, Գյուլբենկյանի ֆոնդը ցույց տվեց մեկ միլիոն դոլարի օգնություն, որի մեջ մեծ քանակությամբ դեղորայք և առաջին անհրաժեշտության այլ առարկաներ:

Խոսելով Լենինականին ցույց տրվելիք օգնության և դրա կազմակերպման հարցերի մասին, քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար Տ. Սարգսյանը նշեց, որ դա կվերաբերվի առաջին հերթին և հիմնականում առողջապահության, գիտության, կրթության և մշակույթի բնագավառները ժամանակակից սարքավորումներով ապահովմանը:

— Մեր հաստատությունը,— վերջում ասաց Ռ. Գյուլբենկյանը,—սփյուռքահայ մի փոքրիկ կոմիտե է, որը լայն գործունեություն է ծավալել հայապահպանության ուղղությամբ: Մենք հիացած ենք լենինականցիներով, որոնք այս ծանր պայմաններում դրսևորում են մեծ կամք՝ քաղաքը վերականգնելու գործում:

Այնուհետև հյուրերը շրջեցին քաղաքում, ծանոթացան Լենինականի իրական դրությանը:

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

06. 10. 89 թ.



